


Վ. ԴԱՐՅԱՆ

ԱՐԱԳԱԾԻ ՎՐԱ



ՊԵՏԱԿԱՆ

891.995

Դ-27

Հ Ա Ր Ա Մ - 2
2196
891.99Մ
Դ - 27

2011-05

Վ. Դ Ա Ր Ե Ա Ն

ԱՐԱԳԱԾԻ ՎՐԱ

Շաղկի նկարը
Գ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՏՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԱՎԱՐՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՏԵՐԵՎԱՆ 1939

29 MAR 2013

30-1102

2-1000-200

3015

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՊՀ ԳԾԱՔ ԱՊԴ



Վ. ՃԱՐՅԱՆ
ԽԱ ԱՐԱԳԱՅԵ
Բա. Արմ. ՀՀ, Երևան, 1939

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՒՄ ԱԿԱԴԵՄԻ

Հ 891

առ մի ամենի մաս ընդունված ու մայք
ուղար բար ու մաս ով ապահ պատ
պահ ուրիշ պահանջանք նախարած լուսի
ուղար պահանջանք ապահ պահանջ լուսի
ՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՃԱՄԲԱՐՈՒՄ

**Ալպինիստների խումբը նոր եր իջել Ա-
րագածից և թափշ կանաչի վրա նստած
հանգստանում եր պիոներական լեռնային
ճամբարի վրանների մոտ:**

Ճամբարի յերեխանները շրջապատել եյին
նրանց և զարմացած նայում եյին ալպի-
նիստների այրված դեմքերին ու տարորինակ
հագուստներին:

Մի քանիսն ուշադրությամբ դիտում
եյին լեռնային սրածայր զավագանները, վո-
րոնց ծայրերին սուր յերկաթներ եյին ամ-
բացված։ Մի խումբ դիտում եր սաոցահատ-
ները և զանազան հարցեր տալիս հոգնած
մի ալպինիստի, Վոմանք ել շոշափում եյին
լեռնային կոշիկները և հարց ու փորձ ա-
նում նրանց հաստ ներքաններին և կողքերին
պինդ խփած մեխերի՝ տրիկոնների մասին։

Յերեխանների մեջ առանձին հետաքրքրու-

թյուն եր դարձեցրել նաև լեռնային պարանը, վորն իր ուսին եր զցել այդ տարուրինակ հաղնված մարդկանցից մեկը: Բոլորի կռնակին կային պայուսակներ:

Նրանք ցած եյին բերել այդ պայուսակները և ուտում եյին իրենց պաշարի վերջին մնացորդները:


Ալպինիսաների դեկավարը թուխ դեմքով, սրածայր քթով մի բարձրահասակ յերիտասարդ եր: Նրա առնական դեմքը և խիստ հայացքը վկայում եյին, նրա կամքի ամրության, դժվար պայմաններում չփհատվող մարդ լինելու մասին:

Նա, բացի սովորական իրերից, ուներ նաև հեռագիտակ, ջրի տերմոս և ուսից կախել եր վորսորդական հրացանը:

Յերեխաների բավական մի մեծ խումբ դիտում եր նրա հանգիստ, անհոգ դիրքը և հանդերձանքը:

Լայնեղը գլխարկը հանել եր, սառցահատըն ամուր խրել գետնի լմեջ և գլխարկը վրան եր կախել:

Նրա կենարոնացած, լուրջ և անվրդով հայացքը մեծ տպավորություն եր գործում յերեխաների վրա:



Հասկառակ սահմանական պացից պահպանության մեջ գտնվող աշխատավորությունը

— Ե՛, յերեխաներ, ինչպես եք անցկացնում ձեր ժամանակը այս գեղեցիկ ճամբարում, — վերջապես խոսեց ալպինիստների դեկավարը:

— Շատ լավ, — համարյա միաբերան պատասխանեցին նրան շրջապատող յերեխաները, վորոնց դեմքերն այդ ըոպեյին այնպիսի հրձվալից փայլ ստացան, վոր կարծես մի մեծ բեռ ընկավ նրանց ուսերից և կամ յերկար ժամանակ սպասած թանկագին նը-վերը վերջապես ստացան:

Յերեխաների թիվս ավելացավ: Բոլորն անհամբեր սպասում եյին, թե ինչ կասի ալպինիստների դեկավարը:

Յերեխաներն իրար եյին անցնում, շարժվում յետ ու առաջ, միմյանց հրմշկում ու հարցական հայացքներն ուղղում ալպինիստ դեմքին:

Նրանք անհամբեր սպասում եյին, թե ել ինչ կասի ալպինիստների դեկավարը:

— Ուրեմն, լավ եք անցկացնում ձեր ժամանակը, այո, — նորից դիմեց յերեխաներին ալպինիստը:

Բոլորն ել պատասխանեցին նրան.


— Այո, շատ լավ:

Նրանցից ամեն մեկն ուզում եր մի բան սսի, խոսի ալպինիստի, այդ տարորինակ հագընված մարդու հետ, շոշափի նրա տերմոսը, լսի նրա պատմությունը լեռների ու ալպինիստական սխրագործությունների մասին:

— Մենք ել լավ ենք անցկացնում մեր ժամանակը լեռների գագաթներին, բայց՝ ուհի, ուհի, յեթե բուքի կամ մառախուզի հանդիպեցինք, են ժամանակ, մարդ կասեմ, վոր դիմանա: Պատահում ե, վոր մարդու լացն ու ծիծաղն իրար են խառնվում: Պինդ եմ՝ կհաղթես, թույլ ես ու վախկոտ՝ կկորչես:

— Ինչպես, — ասացին համարյա բոլորը միասին:

— Այ, թե ինչպես: Գնում ես, գնում: Արև վառում ե: Անցնում ես ձորերը, կիրճերը: Խմում ես սառը ջրերը: Քաղում ես ծաղիկներ. բարձրանում ես լեռների կատարները. մոտենում ե կեսորը. դարձյալ շարունակում ես բարձրանալ. քո շուրջը տեսնում ես անհուն տարածություններ, լեռների կատարներ, կարկաչուն առուներ ու փրփրահույզ գետեր: Անցնում ես մի քարասահանք. մի կիրճ, մի ձնահյուս, ֆիրնային դաշտերը և հանկարծ հանդիպում ես փոթորիկի ու մըրիկի: Դի-



— Ուրեմն լավ եք անցկացնում ձեր ժամանակը:


— Այո, շատ լավ, —պատասխանեցին պիոներները:

մացը մառախուղ ե, վոչինչ չես տեսնումք:
Յերբեմն ամպերն այնպես են գոռում, վոր
մարդ սարսափում ե. մոլեզնում ե բնու-
թյան ահոելի տարերքը: Բայց մենք ժայ-
ռերի ծերպերում պատսպարվելու համար
տեղեր ենք գտնում և թագնվում այնտեղ,
մինչև վոր տարերքը կհանգստանա և լեռ-
նային արևը նորից կհանի իր գլուխը շի-
կավուն, այրված կատարների յետևից ու իր
վառը դեմքով կժառանա մեզ:

— Ո՞հ, — բացականչեցին յերեխաները
թեթևացած։ Պատմության ընթացքում նը-
րանք ավելի եյին սեղմվել իրար և նրանց
հայցքներն ավելի եյին լրջացել։

— Տեսնում եք այս, — ասաց ալպինիստը, ձախ ձեռքն առաջ մեկնելով և ցույց տալով ձեռքի վրայի մեծ սպին:

— Այս գեղքը պատահեց սրանից ուղիղ մեկ տարի առաջ, Արագածի վրա, Աճման ափին։ Ութերրորդ տարին եր, յես գընում եյի Արագած։ Ինձ ծանոթ են Արագածի բոլոր կապրիզները։ Յես գիշերել եմ Արագածի գագաթներին, «Տուրիստ» ջրվեժի մոտ, Մխով աղջուրի մոտ, քրդական յայլաներում, Համբերդում և վերջապես՝ Ար-




խաշենում։ Արագածը ճանաչում եմ իմ
հինգ մատների նման։

Յերեխաների հետաքրքրությունը քանի
դնում ավելի ու ավելի մեծանում եր։ Ալ-
պինիստը նայում եր նրանց և ավելի պայ-
ծառ եյին փայլում նրա սև աչքերը։ Նա
այնպիսի յեռանդով եր պատմում իր լեռ-
նային սխրագործությունները, այնքան եր
փողմորվում, վոր հաճախ մոռանում եր,
շեղվում բուն նյութից և խոսում բոլորովին
ուրիշ բաների մասին։

— Շարունակի՞ր, ընկեր ալպինիստ, շա-
րունակի՞ր, — չորս կողմից վրա տվին յերե-
խաները և սեղմեցին նրան շրջապատող ո-
ղակը։

— Մութ ու դաժան գիշեր եր։ Քամին այն-
պես եր վոռնում և որորում վրանս, վոր
քիչ եր մնում հիմքից պոկեր ու տաներ։
Մեկ ել ուշքի յեմ գալիս սարսափահար, վր-
անիս պատուհանից ներս ե կախվել մի գայլ
և իր թաթերով խաղում ե ինձ հետ։

«Գայլը», — գոռացի յես ու արագ հագըն-
վելով զուրս թռա վրանից։ Դուրս վազեցին
նաև տնտեսվարը և մի յերկու տուրիստներ։
Գայլն այլևս չկար։ Մենք իջանք դեպի լի-




Ճը. առջեկից արագ քայլելով զնում եր տընտեսվարը. հեռվում լսվեց գայլի վոռնոցը և մեր տնտեսվարի ճիշը: «Վազենք»—գոռացի յես և բոլորս միասին վազեցինք դեպի վմը: Յես հասա այն ըոպեյին, յերբ գայլը պառկեցրել եր տնտեսվարին, առջեկի յերկու վոտներով կանգնել վրան և մոմուում եր: Գայլը, յերբ ինձ տեսավ, հարձակվեց ինձ վրա: Աջ ձեռքով բռնել եյի հրացանս, իսկ ձախ ձեռքս թափահարում եյի... մեկ ել հանկարծ զգացի, վոր գայլն իր բերանի մեջ առավ իմ ձախ ձեռքի թաթը: Զգացի, թե ինչպես արյունը տաքացնում եր ձեռքս: Գայլն իր սուր ատամներով կտրել եր ձեռքիս կաշին բավական խորը. ցավից մոռացել եյի ամեն ինչ:

Լսում եյի հրացանի կրակոցները, բայց վոչինչ չեյի հասկանում: Յերբ ուշքի յեկա, տեսա սպանված գայլն իմ վրանի առաջ: Գայլին սպանել եր մեր տնտեսվարը:

— Ահա, այդ որվա հիշատակը, իմ ձեռքի սպին—վերջացրեց ալպինիստների ղեկավարը, կրկին ցույց տալով իր ձեռքի վրայի նշանը:

— Այստեղ մերկ մյուսը վահանակի է:



Ալպինիստների խումբն արդեն հանգըս-
տացել եր:

- Վեր կաց, — հրահանգեց ղեկավարը:
— Շարպի՞ր:

Նրանք մեկական շարվեցին իրար յետե-
փից, ղեկավարն առաջ ընկավ և ճամբարից
իջան ղեպի խճուղին:

Պիոներական ճամբարը յերկար ժամա-
նակ աչքերով հետեւում եր իջնող խմբին և
մտածում.

— Լավ ե ալպինիստ լինելը... բայց ունի
յեթե փոթորկի հանդիսվեցինք...

ՊՅՈՒՅՏԱԿԱՆ ՀԱՄԲԱՐԸ ՀԵՐ ՄՈՌԱՆՈՒՄ

60649-67

Պիոներական ճամբարը չեր մոռանում
ալպինիստների հետ ունեցած հանդիպումը:


Սրագածի Գեղհովիտի արեվելյան լանջին
ամեն առավոտ հնչում եյին պիոներական
ուրախ յերգն ու կանչը:

Նոր ծագող արեգակի առաջին շողերն
ընկնում եյին Սրագածի ձյունածածկ կա-
տարին, վորն այնպես փայլվիլին եր տալիս,
կարծես վուկե հատիկներով ծածկված լիներ:

Իսկ Դալի-չայլ ֆշալեն, փրփուր տա-
լով գահավիժում եր ղեպի ցած՝ Սպարանի
դաշտերը:

Յերեխաները միշտ նայում եյին Սրա-
գածին ու հիշում այրված ղեմքով ալպի-
նիստին:

Այն որվանից պիոներների մեջ ծագել եր
մի նոր ցանկություն, — բարձրանալ լիռների
կատարները, տեսնել բնության տարերքն



ու գեղեցկությունը։ Նրանք արդեն բավական ծանոթացել եյին հայկական լեռնաշարի հոյակապ լեռնազբությանը, վորը Ապարանի բարձրավանդակով միանում ե Արագածի հետ։

Ճամբարի դիմաց, լեռնալանջից նրանք ամեն առավոտ արշալույսին, արևի պայծառ շողերի տակ և յերեկոյան վերջալույսի վարդադրույն ցոլքերով վողողված տեսնում եյին Փամբակի լեռների շարանը, Միսխանայի յերկարաձիգ շղթան, Ալիքեզի կատարը, առանձնակի ցցված Արայի լեռը, հեռվում կանաչով ծածկված Արարատյան դաշտավայրը։


Ու այդ լեռներում լինելու, նրանց ճանաչելու տենչն ավելի եր այրում փոքրիկ հայրենասերներին։

Ամեն որ նրանք դիմում եյին իրենց ճամբարի ղեկավարին։

— Յերբ կբարձրանանք Արագածի դաշտը։

— Յերբ բոլորս տաք հագուստներ կունենանք, — միշտ պատասխանում եր նրանց ճամբարի ղեկավարը։

Իսկ Արագածը միշտ ժպտում եր ու հրապուրում պիտներական ճամբարի պատանի բնակիչներին։



Մի որ ճամբարում կատարվեց Արագածի
գագաթը բարձրացողների հատուկ ընտրու-
թյուն։ Շատերն եյին ցանկանում զնալ։ Բայց
բոլորին չեր վիճակված։ Կատարվեց քժը-
կական քննություն և ընտրեցին ամենից
առողջներին ու մեծահասակներին։

Առավոտյան, արկի առաջին ճառագայթ-
ների հետ արթնացավ պիոներական լեռնային
ճամբարը:

Պատանի ալպինիստները պրադ լվաց-
վեցին, հագան լեռնային հանդերձանքը և
շարքով կանգնած սպասում եյին զեկա-
վարի հրահանգին:

Ուրախությունն եր տիրել պատանիներին։
Նրանք պիտի անցնելին Արագածի արե-
վելյան գագաթը, դեպի «Տուրիստ» ջրվեժը
և այնտեղից դիտելին մեր լայնածավալ յերկ-
րի հեռուները, սպիտակափառ գագաթները,
ծաղկուն ու առաստ դաշտերը, բարգավաճող
ու կառուցվող դյուղերն ու քաղաքները։

11

*

Սքանչելի յև Գեղհովիտն առավոտյան:

Պատանի ալպինիստների խումբը յերկար
շարքով, դանդաղ քայլերով բարձրանում էր
Գեղհովիտի արեվոտ լանջով։



Կարկաչուն առվակներն ու Շմիլլացող
թոշունները, բզզացող մեղուներն ու բազմե-
րանգ թիթեռները հրաշալի ներդաշնակու-
թյուն եյին ստեղծել էանաշ խոտերի, գունա-
գեղ ծաղիկների հոտ ու բուրմունքի հետ:

Քոլորը լուռ քայլում եյին անուշաբույր
ծաղիկների ու դալար, թափշյականաշի վրայով
դեպի վեր, դեպի գագաթը:

Առջեից գնացող պիոները տանում եր
ալպյան պարանը, իսկ չորս հոգի, և մենից
ուժեղները, տանում եյին վրանները: Խմբի
ղեկավարը գնում եր քոլորի առջեից: Քոլոր
պատանի ալպինիստներն ունեյին լեռնային
սրածայր գագագաններ, սուր պողպատյա
ծայրերով, մի քանիսն ել՝ սառցահատներ:

Այսպես շնչելով լեռնային թարմ սղը,
դանդաղ ու զգույշ առաջ եր շարժվում պատա-
նի հայրենասերների խումբը:

Նրանք գնում եյին դեպի «Տուրիստ»
ջրվեժը, վորը լեռնային ճամբարից ինը կիլո-
մետրի վրա եր:

Այս ջրվեժը գտնվում է Քաղցր Ջերի
հովտում, Արագածի արևելյան լանջին և
գոյանում ե Արագածի խառնարանի ձյունե-
րից: Արագածի լանջերի ջերը հոսում են

կանաչավետ հովիտների միջով և կազմում
Դալի-չայ գետը:

Այստեղ են նաև Արագածի յերեք հոյա-
կապ ջրվեժները և խիտ կանաչով ծածկված
Մխով աղբյուրի հովիտը:

Վաղուց արդեն ճամբարը մնացել եր ֆեղ-
հովիտի բարձունքների յետևում: Այստեղ,
ջրվեժի մոտ վերջանալով, Գեղհովիտն ավելի
լայնանում ե, իսկ դիմացը, դեպի վեր ե
սլանում Արագածի արևելյան գագաթը:

Կեսորվան արևն սկսում եր ավելի այրել
Պատանիների խումբը գնում եր փոքրիկ
կանգառներով:

Ճրտում եր:

Ջրվեժի աղմուկը հետզհետե ավելի ու ա-
վելի եր մոտենում:

Նրանք բարձրանում եյին թեք քարա-
ժայոի վրայով: Կոշիկների մեխերը ամուր
սեղմվում եյին գետնին և վերելքը քանի գնում
դժվարանում եր: Վաղուց նրանք անցել եյին
կանաչապատ հովիտները և այժմ իրենց
հանձնել են քարքարոտ, մորեններով ծածկը-
ված լեռնալանջերին:

— Կապվել պարանով, — հրահանգեց խմբի
դեկավարը:



Ալպինիստները պարանի ոգնությամբ բարձրանում են ժայռի
կատարք:

Առջևից գնացող պիոներն արձակեց պա-
րանը և նրանք բոլորը կապվեցին: Արևելյան
լանջին, դեպի ջրվեժը տանող նեղ ձորաբե-
րանը ծածկված եր հաստ ձյունաշերտով և
այնտեղից անցնելը կախված եր մեծ դժվա-
րությունների հետ:

Կոշիկները սայթաքում եյին, լեռնային
դափազաննեցն անզոր եյին: Միակ միջոցը
պարանով կապվելն ու մեկ-մեկ անցնելն եր:


Դեկավարը, վորը գնում եր առջևից,
սառցահատով ջարդում եր սառուցի ու
ձյան հաստ շերտերը, սառցյա աստիճաններ
եր փորում և բոլորին մեկ-մեկ բարձրացնում
ժայռի վերջին կատարը: Վերելքը տեվեց մի
քանի ժամ:

— Սայթաքում ե..., գոռացին հանկարծ
մի քանիսը միասին:

Մեկը, վորը թույլ կախվել եր պարա-
նից և արհամարհելով դժվարությունը, գո-
ռողանալով ուզում եր սառցադաշտի վրա-
յով առանց պարանի ոգնության բարձրա-
նալ, վայր ընկավ և ցած գլորվեց:

Դեկավարը ձգեց պարանը, յերկու ալպի-
նիստների հետ նրանք ուժեղ թափով կահզ-
նեցրին նրան և վեր հանեցին:

այս ըմբածութիւն բարեմք պահանձ
մայութեալ անիշտիւթիւն դպուց գմանց և զանց
անունը ուն յունակ զնակից պահք շիշանց



Գեղիովիսում :

Փայուի վրա հավաքվեց ամբողջ խումբը:
Լեռնային պայծառ արեգակի ճառագայթ-
ներն սկսում եյին հետզհետե մարել: Լեռ-
նագագայթները ծածկվում եյին մութ շղար-
շով: Յերեկոն իջնում եր: Ջրվեժն ավելի եր
մոտենում:

— Ուռամ,—կանչեցին բոլորը միասին:
Դիմացից, շատ մոտիկ յերեւում եր Ջր-
վեժը: Մի քանի րոպէ հետո արշավախումբը
կանգ առավ հիսաքանչ ջրվեժի տեսարանի
առաջ, վորի վրա հանդիստ իշխում եր քա-
ռագագայթ Արագածը:

Նրանք պատրաստվում եյին այդտեղ զի-
շերելու, իսկ առավոտյան թարմ ուժերով
գրոհելու արևելյան գագաթը:

Չորս սպիտակ վրանները կանգնեցրին
փրփրահույզ Ջրվեժի կողքին:

Յերեկոյան ընթրիքից հետո սկսվեց ու-
րախ յերգն ու պարը: Տուրիստական պայ-
ծառ խարույկը լուսավորում եր Արագածի
լեռնալանջերն ու հովիտները:

Գիշերը բոլորը քնեցին, բացի սպահակնե-
րից:

Տուրտ և ահավոր եր զիշերը Արագածի
վրա: Առավոտյան արևածագին ճամբարը



Անձնական թվային գործոցը պահպանության մեջ ըստ լուսապատճենի համար համապատասխան է:

Պարթևնեց։ |Թանձր մառախուղի միջից հազիվ եյին նկատվում Արագածի գագաթները, վորոնք սկսում եյին կամաց-կամաց ազատվել քամուց հալածվող մառախուղից։

Խումբը սկսեց շարժվել դեպի Արագածի արևելյան գագաթը, հաշվի առնելով յուրաքանչյուր քայլը. բոլորը լավ գիտեյին, վոր այստեղ սրտի համար ավելի մեծ աշխատանք կա, քան վոտների։ Պետք եր զգույշ լինել։

Բացի դրանից անհրաժեշտ ե հաշվի առնել լեռնային վերելքի սպառնալի պայմանները՝ քարընկեցները, քարասահանքները, ձյունահյուսերը և վտանգավոր ճեղքվածքները։

Խումբը համառորեն առաջ եր զնում փոքրիկ կանգառներով։

— Քարընկեց, — գոռաց հետեւից յեկող պիոնները։

Բոլորը միանգամից կանգ առան և արագ թափով մեջքի պայուսակներով ծածկեցին իրենց գլուխները։

Դիմացի քարաժայոից պոկվել եր ու գեպի հովհան եր գլորվում մի մեծ քարի կտոր։



: սկզբան յվելութիւնը գ յարդք նվազում և միահայտ փոխարի

Յելք վտանգն արդեն անցել եր, նրանք
շարունակեցին իրենց վերելքը:

Հեռվում աստիճանաբար բացվում եր
Արագածի Հյուսիսային ամենաբարձր գա-
ղաթը: Բացվում ելին նաև հարևան լեռնա-
գագաթները: Հորիզոնը պայծառանում եր և
տարածվում հեռու, շատ հեռու գեղի Հայ-
կական լեռնաշարի հեռավոր գագաթները:

Կեսորվա արևն այրում եր դեմքը, վոտ-
ների բաց սրունկները և թևերը:


— Գագաթը, գագաթը — կանչեցին առջեց գնացողները և վազելով հասան դեկ վարի ցույց տված կետին:

— Ուռամա — ինչքան լայն եւ ու անեզր
մեր յերկիրը, ինչքան վառ եւ ու պայծառ
Խորհրդային արևը, ինչքան յերկնասալաց ու
վեհ են մեր լեռները։

Նրանք Արագածի զագաթին եյին:

Նրանց դիմաց սկարզ յերևում եր Խոր-
հըրդային Հայաստանի միջով ձգվող հսկա-
յական լեռների շարանը։ Այդ Հայկական կամ
Փոքր Կովկասյան լեռնաշարն եր, վորք հյու-
սիսից սկսվում ե Մթին կամ Խոնավ լեռնե-
րից և ձգվելով հասնում ե մինչև Արաք-
քետի ափերը։


Կեսորյա արևի կիզիչ ճառագայթների



Լեռնի գրիվ:

տակ փայլվլին եյին տալիս Աղմաղանի ձյունածածկ լեռները, վորոնք ձգվում եյին հեռու-հեռու, յերկնի մովի մեջ, մինչև Սևանի կապուտակ ջրերը:

Աղագածի լայնատարած փեշերը տարածվել եյին դեպի Շիրակի դաշտերի խորքերը: Իսկ դիմացը, հակա բուրդի նման, հարթության վրա յերևում եր ալեհեր Արարատն՝ իր յերկու սրածայր ձյունածածկ գագաթներով:



Հավիտենական ձյուների և սառուցների վրա:

Պատանի ալպինիստները յերկար-յերկար զիտում եյին Մըակայքը ու չեյին հագենում այդ զմայլիչ ու հրապուրիչ լեռնային տեսարաններով:

Աղը ցըտում եր:
Հքահանդվեց տաք հազնվել:
Խումբը դանդաղ իջնում եր դեպի ճամ-
բար:

Իրիկուն եր: Պատանի ալսինիստները,
փաթաթվելով տաք պարկերի մեջ, խորը քնե-
ցին Արագածի զովաշունչ կրծքին, զիշերային
քամու մեղմ որորի տակ, վառ խարույկի մոտ:

Շատ քաղցր եր այդ քունը որվա հոգնա-
ծությունից հետո, կազդուրիչ և անդորր:

Պատանի վահանան
Տես. խմբագիր՝ Վահանան
Սել. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ Մ. Փարսադանյան



255

Պատանի վահանան Հրատ. 4914.

Պատանի 498. Տիրաժ 3500.

Թուղթ 62×94. 8դագրական. 2^{1/4} մամ.

Մեկ մամ. 17280 նշան.

Հանձնված և արտադրության 15 մայիսի, 1939. թ.

Ստորագրված և տպադրության համար 27 հունվարի, 1939 թ.

Գետհրատի 1 տպարան, Երևան, 1Կինը, 65.



412604.

456

8250

PM-K

196

BB

807

1
9